ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.12.2020թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը Մ.Անտոնյանը, Է. Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Ստարտ կոպի Գրուպ» ՍՊԸ (ք. Երևան, Մարգարյան 2-նրբ, 3 շենք, բն.15)
2 . «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ (ք. Երևան, Գլինկայի նրբ. 4/1)
3. ԱՁ Անուշ Պետրոսյան (ք. Երևան, Արշակունյաց 5)
4. ԱՁ Գրիգոր Այվազյան (Արարատի մարզ, գ. Ոստան,Թեիլերյան 14)
5. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ (ք. Երևան, Բագրատունյաց 25/27շ.)
6. ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի (ք. Երևան, Գրիբոյեդով 44)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ն գնային առաջարկին կից ներկայացրել են տեխնիկական սպասարկման ծառայությունների միավոր գները,սակայն հրավերով չի պահանջվել:
Մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվելու են համաձայն հրավերի 5.2 կետի բ) ենթակետի:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Հ/Հ	Անվանում	Գնման հայտով	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/

		սահմանած գին	«Ստարտ կոպի Գրուպ» ՍՊԸ	«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ*	ԱՁ Անուշ Պետրոսյան*	ԱՁ Գրիգոր Այվազյան *	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ*	ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի *
1	Համակարգչային սարքերի պահպանման – վերանորոգման ծառայություններ	2369500	-	-	2230000	-	3000000	1950000
2	Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	2831000	2166000	1981700	2629490	2831000	3000000	2500000

***Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարել **1-2** չափաբաժինների համար և հաջորդ նիստը հրավիրել **2020թ. դեկտեմբերի 22-ին, ժամը 10:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում բավարար գնահատված կազմակերպություններին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 22.12.2020թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Կ.Հովհաննիսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը Մ.Անտոնյանը, Է. Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ լիազորված անձ Ռոման Սիմոնի Նազարյանը, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ լիազորված անձ Ղևոնդ Բարիկյանը և . ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի տնօրեն՝ Արգիշտի Մկրտչյանը:

1.Միաժամանակյա բանակցությունների մասին

Բանակցությունների արդյունքում.

1.**«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի** կողմից 1, 2, չափաբաժինների գները նվազեցվեցին,

2.ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի կողմից 1-ին չափաբաժնի գինը նվազեցվեց,

3. «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի գինը նվազեցվեց,

2. Նոր գնային առաջարկ

Հ/Հ	Անվանում	Գնման հայտով սահմանած գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/		
			«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ*	ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի *	«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ*
1	Համակարգչային սարքերի պահպանման – վերանորոգման ծառայություններ	2369500	1790000	1750000	-
2	Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	2831000	1650000	-	1700000

***Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:**

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

1.1 Ընթացակարգի **ընտրված** մասնակիցներ ճանաչել՝

1-ին չափաբաժնի համար **ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի** –ին,

2-րդ չափաբաժնի համար **«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ** –ին,

1.2 Ընթացակարգի **երկրորդ** տեղ **զբաղեցրած** մասնակիցներ ճանաչել՝:

1-ին չափաբաժնի համար **«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ** –ին,

2-րդ չափաբաժնի համար **«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ** –ին,

''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. «ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Կ.Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան

Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ լիազորված անձ Ռոման Սիմոնի Նազարյան

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ լիազորված անձ Ղևոնդ Բարիկյան

ԱՁ Արգիշտի Մկրտչյան Ասատուրի տնօրեն՝ Արգիշտի Մկրտչյան